ցավ, որևէ հնար չգտավ ազատվելու, ընկավ Ավագի ոտքերը և մտավ երկու ծնկների միջև, բռնեց ամորձիները և ծծում էր. ասում էր՝ ես քո շունն եմ, քո աղբը կլիզեմ, մի թողնի, որ ինձ սպանեն, և ես քեզ շուն կդառնամ:

Ապա Ավագը գթաց, ընկավ նրա վրա և ասաց՝ դրա փոխարեն ինձ սպանեք և թողեք դրան: Ապա դադարեցին ծեծելուց: Իսկ անիծյալի կանայք, երբ լսեցին այս բոթը, վրաններից դուրս եկան, ճչալով, ճվալով: Մեկը ասում էր իմ երեխան վիժեցի, մյուսը ասում էր իմ որդուն սպանեցին, մեկը աղաղակում էր, թե բռնելով պղծեցին ինձ: Սակայն սրանցից ոչ մի օգուտ չստացան, այլ ավելագլուխը բարակ ճիպոտով թեթև-թեթև ծեծում էր նրանց և ասում՝ ելեք, կորեք այստեղից: Իսկ նրանք ուղտեր բերին, նստեցին նրանց վրա և փախան: Իսկ այն պիղծը չկարողացավ գնալ բազմաթիվ հարվածների պատճառով: Երեք օրից հետո առողջացավ, ելավ կորավ: Գյուղի Հոհան անունով քահանան փախավ, ընկավ ձորը, մտավ աղվեսի մի որջ և ազատվեց: Իսկ այն գյուղացիներին, որ նրա համախոհներն էին, բռնեցին խիստ ծեծեցին ու վիրավորեցին, քանդեցին նրանց տները ու տիրեցին գյուղին:

Իսկ անիծյալ Հապուշ Ղասիմը ծածուկ շրջում էր, մնաց մինչև աշուն: Իր հետ միաբանեց երեք մահմեդական, մի սուտ քրիստոնյա, գիշերը գնացին Եղվարդ, մահմեդականները մնացին գյուղի եզրում, իսկ սուտ քրիստոնյային ուղարկեցին Ավագի մոտ: Ասացին, թե այսինչ մահմեդականը եկել գյուղից դուրս սպասում է, շտապ խանի հրամանով գնում է Նիգ գավառը, ուստի քեզ և քո որդի Սարուբեկին խնդրում է, որովհետև ասելիք ունի քեզ: Իսկ Ավագը գտնվում էր մի տան մեջ երկու մահմեդական հարկահանների հետ, իսկ որդին ծառայում էր նրանց:

Սուտ քրիստոնյան գնաց նրանց ասաց այն, ինչ սովորել էր: Երբ Ավագը լսեց բարեկամի անունը, շտապ վեր կացավ, առավ որդուն, հայի հետ գնաց: Երբ տեսան նրան, բռնեցին. պիղծը բարձր ձայնով գոչում էր ու ասում, թե ինքը Հապուշ Ղասիմն է, որ Ավագը իրեն չսպանեց, իսկ ինքը նրան սպանում է: Որդին պրծավ, մինչև հայտնվեց գյուղին, նրանք սպանեցին Ավագին ու անհայտացան:

Նրան վերցրին, տարան գյուղ և հաջորդ օրը հայտնեցին խանին: Խանը հրամայեց գտնել նրան, բայց չգտան, քանզի նա գնաց

Արտաբիլ: Այնտեղից զոջման թուղթ առավ, եկավ Երևան, ծածուկ շրջում էր: Նույն ձմեռը սատկեց, տարան խոռճկեցին: Նույն գիշեր երեք մահմեդական նրան գյոռից հանեցին, պատանը պատռելով, պատեցին վիզը և երկար հաստ մի փայտ սրելով մտցրին նստուկը, ցցեցին գոռի վրա, առնանդամը կտրեցին դրին երախը ու փախան: Հաջորդ օրը տեսան այդ, հայտնեցին խանին: Խանը ասաց՝ այն շունը քանի կենդանի էր, իր անտերը երախում էր պահում, երբ սատկեց երախում երևում է: Թաղել չտվեց նրան, թողին այնպես, շներն ու ագռավները լափեցին: Իսկ Ավագը նահատակվեց ժողովրդի համար և պսակվեց Քրիստոսի կողմից:

ԳԼՈՒԽ ԾԹ
ԲԱՂԴԱՍԱՐ ՊԱՏԱՆՈՒ ՆԱՀԱՏԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Այս պատանի Բաղդասարը Եվդոկիա քաղաքից էր, որ այժմ կոչվում է Թոխաթ: Ազգությամբ հայ էր, քրիստոնյա ծնողների զավակ: Սա մի դրացի մահմեդական ուներ, որ կոշկակար էր: Բաղդասարին տվին նրան աշակերտ: Մահմեդականը Բաղդասարին առավ գնաց Զմյուռնիա, այնտեղ իրենց արհեստն էին բանեցնում: Մի օր վարպետը ելավ գնաց ինչ-որ գործով և ուշացավ: Այն հարկահանները, որ օտարներից հարկ են առնում, որ կոչվում է խարաջ, Բաղդասարին ասացին՝ հարկ տուր: Բաղդասարն ասում է՝ «Թողեք իմ վարպետը գա, ինչ որ պահանջում եք, նա կտա»: Իսկ նրանք չներեցին, այլ առան տարան հարկապետի մոտ: Հարկապետը հարցրեց՝ ինչո՞ւ քո հարկը չես վճարում: Երանելի պատանին ասում է՝ ասացի, թողեք մինչև իմ վարպետը գա, նա կտա: Հարկապետն ասում է՝ եկ, դարձիր մահմեդական, և մենք կզիջենք քո հարկը, նաև կավելացնենք, քեզ շատ դրամ կտանք: Բաղդասարն ասում է՝ հինգ մարջլի (դրամական միավոր, հավասար է մեկ ռուբլի վաթսունվեց կոպեկի) համար իմ հավատը չեմ ուրանա: Ապա անօրենները բռնեցին անմեղ պատանուն, գցեցին գետինը, բռնի թլպատեցին, տվին բեռնակրի շալակը և տարան գցեցին իրենց արհեստանոցը: Վարպետը եկավ տեսավ իր աշակերտին այդպես վիրավորված: Բարկացած ելավ գնաց հարկահանի մոտ,